ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանի շնորհավորական ուղերձը՝ Ուսուցչի օրվա առթիվ

Սիրելի՛ մանկավարժներ, կրթության ոլորտի նվիրյալ աշխատակիցներ,
Սրտանց շնորհավորում եմ ձեզ Ուսուցիչների օրվա առթիվ: Ձեր աշխատանքը ոչ միայն մասնագիտություն է, այլև մի ամբողջ հոգևոր առաքելություն, որի միջոցով ձևավորվում են մեր պետության ապագա քաղաքացիները: Դուք եք սերմանում գիտելիքի սերն ու պատասխանատվության զգացումը, մարդկային արժեքներն ու հայրենասիրությունը՝ ամրացնելով մեր հասարակության հիմքերը:
Մեր մարզի զարգացման ու առաջընթացի հիմնասյուներից մեկը կրթությունն է, իսկ դուք՝ դրա ամենամեծ հենարանը: Ձեր նվիրումն ու հետևողական աշխատանքը արժանի են ամենաբարձր գնահատանքի և հասարակության անկեղծ հարգանքի:
Թող ձեր աշխատանքը միշտ ուղեկցվի սաների սիրով, գործընկերների գնահատանքով և պետության աջակցությամբ: Մաղթում եմ ձեզ առողջություն, անսպառ եռանդ, ստեղծագործ մտքեր և նոր ձեռքբերումներ մեր կրթական համակարգի բարելավման գործում:
Հարգանքով և երախտագիտությամբ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյան